

297

Preparatory  
110

1925

Հ-17

220

# ԲԱՅԱՆԵԿԻԿԵ ՆԻՐ-ԿԱՏԱՆԻ



ԻԳՐԱԳԻՐ  
Հ-17

Հ. ՀԱԿՈՒՅԱՆ

# 2004

709

891-99

2-17

Պրոլետարներ ըլոր յերկրների, միացե՛ք

15/6 26.

Հանրապետության ժողովրդական կառավարումը

Մեկ


ՀԱԿՈՒ ՀԱԿՈՒՅԱՆ ինչ պայմաններ:

կր

ԲԱՅԼՇԵՎԻԿ Ե

ՇԻՐ - ԿԱՆԱԼԸ

ԹԻՖԼԻՍ \_\_\_\_\_ 1925



Handwritten text in Georgian script, including a date "12/22" and other illegible characters.

### ԲԱՅԼՇԵՎԻԿ Ե ՇԻՐ-ԿԱՆԱԼԸ

(Մերածուծյուն)


Յեկեկ եմ...  
Յեկեկ եմ, վոր մի որում յերգեմ յերգդ այն զիլ-հնչյուն,  
վոր ձուլեցին պոյետներդ յեղիհարյուր յեղի որվա միջում:

Յեկեկ եմ, վոր վողջունեմ այն վայրերին ըս սիրասուն,  
ուր դարերով յերբեմն միայն ծղրիղներն էյին խոսում...

Յեկեկ եմ...  
Յեկեկ եմ համբույր տալու այն յերաշատ կոշտ հողերիդ,  
վորոնց միջից առատորեն կաթ ու մեղրն ե այսոր հոսում:

Դո՛ւ Շիր-Կանալ, վոր հազարանց քրտինքների միջից բար,  
նրանցքրտինքետեր շինած դարձարխորհուրդն աշխատանքի,  
դու վոր հազար հազարների քլունգների յերգը լսած  
առատության հիմնը շուրթիդ հիմք ես զնում մի նոր կյանքի՝  
մեծ վողջույնի և հրճվանքի յերգն եմ բերում քո դաշտերին —  
և հիացմունք բոլոր ազգի, բոլոր յերկրի պոյետներին:

95426-04



110-2014  
18110

Handwritten signature or initials in blue ink.

## I

Բայլշեիկ ե Շիր-Կանալը—մի աժդահա հեքյաթային,  
 նրա շուրթը ջուր ե խմում պաղ ահունքիցն Արփաչայի.  
 գլուխը հաղթ թաղել ե խոր կանաչագույն, գուլալ գետում,  
 պոչը հեռու Կապսի ծոցում, ալիքներ ե հեռուն նետում:

Մեծ ու մեծ ե Շիր-Կանալը, կամարաձև, գեղեցկաթով,  
 փաթաթվել ե, վոնց ե գրկել Շիրահարթը յերկու թաթով.  
 մի խանդավառ կարոտ ունի, են ծարավը սիրած յարի,  
 վոր կարծես թե սեր ու խանդի կարոտել ե հազար տարի.  
 հույզեր ունի սրտի խորքում խորհրդավոր իր հորձանքով —  
 վողջ իրանքը դողունքի մեջ ապրումների մի կրքոտ ծով.  
 և ամենքին իր յերթի մեջ ում տեսնում ե ու ճանաչում՝  
 խոխոջումով լսումես մեկ, ավետում ե՝ վողջոյն, վողջոյն...

## II

Բայլշեիկ ե Շիր-Կանալը... այն վայրերը լերկ ու բարբադ,  
 վորոնք իրենց ծնված որից այրի եյին—մերկ-անապատ՝  
 այսորից հետ հագնելու են սիրակարոտ հարսերի պես  
 դուք զարդարված խասուկանաչ, թավիշմետաքս զառուզարբաբ:

Մի հմայող վոլորտումով, արծաթափայլ գրավչությամբ,  
 հիմա հեռու հեռուներն են ձգվել ցանցերն Շիր-Կանալի.  
 այնպես գրկել, այնպես ծծում հողի շուրթը ազահությամբ,  
 վոր կասես թե հողն ե տնքում պինդ համբույրից սիրահարի:

Վոն մի թիզ հող, վոն մի ավան և վոն մի գյուղ խոչկանդ գաշտից  
 զգում ես վոր չի տանջվելու այսուհետև բարկյերաշտից:

Բայլշեիկ ե Շիր-Կանալը, հոգսը քաշող ամեն մարդի—  
 մեծահոգի, ներողամիտ՝ բարեկամի ու տմարդի:

## III

Բայլընիկ ե Շիր-Կանայր... Դարու զավակ այս հերոսին,  
մեր այս դարու հարազատին ով չի տեսել թո՞ղ զա տեսնի.  
միլյոնավոր պայթյունների, հարձակումի ականներով,  
Արփաչայի ժեռ ափերին զրո՞հ տվող ուռաներով,  
գիրքերից—գիրք, նվաճումներ, մի թո՞նսելը զողող մյուսին,  
աշխատանքի հերոսները մատի շարժով նրան ասին.—  
Ուր ձեռք մեկնես այնտեղ հրաշք, այնտեղ մի գյուղ թող կանաչի,  
ուր յերևաս, ուր ել հասնես մի նոր սերունդ այնտեղ աճի.  
ով ծարավ ե թո՞ղ հագենա, ով յարամագ՝ թող կշտանա...  
այսպես ե մեր Շիր-Կանայր, մի գյուղերցի ողնւլ ե նա  
և՛ դարդիման և՛ սրտաբուխ և՛ լայնաշուրթ և՛ հյուրասեր—  
քեփը տեղը, յերգը բերնին, խոսքը շուրթին, լիառատ սեր:

## IV

Բայլընիկ ե Շիր-Կանայր... և գյուղերը գիրկըն առած  
ցանցել ե իր արյունատար յերակներով համատարած.  
մեկը պիտի հազարների մասին հոգա—մի դեկավար—  
հազարները խանդով վառված պիտի հոգան մեկի համար...  
Հրեն հապտը սարին կանդնած հովվականչի ձեն ե տալիս,  
թե հեյ լսեք, հրես ջրիս ձենն ե գալիս, ձեզ ե գալիս...  
Կանգ ե առել Պոլիգոնը և սիրահար կույսի նման  
քրքջում ե ու սպասում, վոր գան գրկեն, սիրեն իրան.  
անհամբեր ե Որթաբլիսան, բաբախում ե սիրտը նրա,  
ցնծությունից շունչը պահած քիչ ե մնում ճշա, պոռա.  
յերագում ե Թոփաուվան, աչքով անում Ղոնախուանին,  
հասկանում ե Հաջի-Նազար ու կանչ անում հարևանին:

—

Այսպես մեկը ձենում մյուսին, ավետում ե հետու տեղից,  
Դյուղաքյանդը՝ Քափանակին, Թափոլադը՝ Իլխիաբին.  
այսպես մեկը անա մյուսին ավետում ե յերկու վերստից,  
թե գալիս ե Շիր-Կանայր—բայլընիկը Հայաստանի:

## V

Ուրիշ փահմ ու սամթ ել ունի մեր բայլեիկ Շիր-Կանալը.  
 նա Շիր-դաշտի մեջքը գրկած Կապսի մոտից ինչպես նալը  
 շրնկեցով նորից պիտի թափվի ծոցը Արփաշայի,  
 վոր պայքարի միջից խլի ուժը հիզրո-ֆիկացիայի:

Յերգիչներից վճր մեծն եր այն, վոր յերգել է ուժի մասին.  
 Շիր-Կանալը փրփուր խասով շիր-առյուծ է, բաշը՝ լուսին.  
 լույս թևերի փաղաքշանքով պիտի ցանցի վողջ գյուղերին  
 և զինամոն կայծակ-փնջով այլի ներհը մութ հյուղերի.  
 պիտի տեսնեն, վոր լուսաշաղ ասեղները ելեքորոնի  
 միտք է ցնցում, գյուղին ասում, վոր անելիք ինքն ել ունի.  
 Շիր-Կանալը շիրի նման հոնդացող մի պատանի —  
 ալիքները փրփուր խասով լույս ապագան Հայաստանի:

## VI

Մեր բայլեիկ Շիր-Կանալը ուրիշ փահմ ու սամթ ել ունի.  
 Ջիավարի սանձը ձեռքին հսկա ուժով ելեքորոնի  
 Պիտի շարժի ու փոթորկի գործարաններ ու ֆաբրիկներ,  
 Զրաղացներ, սղոցարան, ալեկոծի հող ու ցանքեր:

Այն յերկիրը, վոր դարերով քարացել եր ու ցամաքել՝  
 այսորից հետ պիտի յերգի աշխատանքի հզոր յերգեր:

Շատ է լացել համը լացով Շիրակը իր դարդի մասին,  
 իսկ այսորից նա լի թոքով թող ամենից բարձր խոսի:

Շատ է տանջվել ու տուկացել անհարազատ մարդոց ձեռքին,  
 իսկ այսորից թող նվաճի ու տիրանա իր նոր կյանքին:  
 Ու կտանջվեր նա ել նորից, թե չծնվեր հողթ պատանին,  
 թե չհասներ Շիր-Կանալը — Բայլեիկը Հայաստանի:

(Վերջաբան)

Մատաղ լինեմ յես այն որին, մատաղ լինեմ յես այն ժամին,  
 յերբ ինձ նորից կը վիճակվի այցի գալու Շիր-Կանալին:  
 Տեսա նրա յերկունքը յես՝ պեղումները տարի առաջ,  
 այժմ նրա բաղ ու բախչեն արտն ու հանդը, ծառ ու կանաչ:  
 Վիլաների թավուտ անտառ, ծառուղիներ-ծաղկանոցներ,  
 վորոնց բույրից կը գգա նորից ջահելություն՝ իմ հողին ծեր.  
 և գիշերը հազարաչյա տարածելով լույսի փշեր  
 ինձ կերևա հեռու տեղից մի աստղազարդ հեքյաթ գիշեր.  
 և կը սուլան ֆաբրիկաների գուղոկները ուրախ կանչով,  
 վողջունելով գյուղ ու քաղաք ալ բոցերի հուր ճաճանչով:  
 Բայլ ընկիկ ե Շիր-Կանալը՝ մեծ գավաղը Հայաստանի,  
 նրա վորդին ջահը ձեռքին լույսի աղբյուր մի տիտանի:

1924 հոկտեմբեր  
 Թիֆլիս:

ՄԵՌԱՆ՝ ՉԿՈՐԱՆ...



Ինչպիսի հերոս ընկերներ մեռան,  
 Մեռան՝ չկորան...

Կրակն եր ցայտում նրանց աչք-ուներից,  
 Շանթը՝ շրթուներից,

Յերբ խոսում եյին ծով ամբոխի մեջ

Վիշտ ու կարիքից.

Վրեժի, ցասման հրով բորբոքված՝

Նրանք բեմ յելան

Յեվ բեմը դարձավ արյունով ներկված՝

Զոհերի սեղան.

Ինչպիսի հերոս ընկերներ մեռան...

Այսոր բանտերում, վաղը աքսորում,  
 Մյուս որ կախազան  
 Հանելու համար, դահիճը դաժան  
 Կացինն է սրում,  
 Բայց հերոսների շուրթերից սեղմված  
 Նզովք չէ լսվում,  
 Բաժակն են ըմպում վերածնության  
 Սյուներին կախված,  
 Ու հիմնը յերգում Հեղափոխության՝  
 Հպարտ—չհաղթված.  
 Ի՛նչպիսի հերոս ընկերներ մեռան...  
 Հէյ, ազատության անպարտ զինվորներ,  
 Իսկ վոր անխուս  
 Ներկեցիք փողոց ու գործարաններ  
 Ձեր տաք արյունով,  
 Նույն վայրում այսոր ջահիլ ջիվաններ  
 Ըմբոսա շարքերով  
 Ձեր գովքն են անում... Ձեր թափված արյամբ  
 Մնվում, ամրանում...  
 Յե՛վ անմահներից յերգվում են անվամբ  
 Ու հպարտանում,  
 Վոր զսուք, հիրավի, պատվով, վեհությամբ  
 Ձեր գործը տարաք՝  
 Մեռաք... չկորաք:

1907 թ.

## ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

\*  
\*  
\*

Տեսե՛լ ես, ընկեր, ալեկոծումը  
 ահեղ ովկյանի,  
 Ուր յերկու ալիք շարժուն սարի պես  
 իրար են վազում,  
 Իրար են վազում փրփուրը բերնին  
 հովազի նման  
 Ու հոխորտալով, զարնվում, փշրվում  
 ալազի նման...  
 Իսկ յերբ անցնում է վրեժի րոպեն —  
 հուզումը վայրի,  
 Տեսե՛լ ես ինչպես հանդստանում է  
 հսկան ջրերի.  
 Մեղմանում է նա... մանուկի նման  
 ժպտում է ալիք.  
 Ալիքի միջից մի յերգ աննման,  
 Ծփալով մեղմիկ —  
 Շոյում լսելիք...

\*  
\*  
\*

Լսե՛լ ես ընկեր, ըմբոստ յերկնքում  
 կոչը վորոտի,  
 Վոր դղրդում ե վորպես մի պայթյուն  
 մեծ թնդանոթի.  
 Տեսե՛լ ես ինչպես ամպերի կրծքին  
 կայծակը զիկ-զակ  
 Իր լիզն ե մխում փութկոտ շեշտակի  
 ու ցնցում աշխարհ...  
 Կամ ինչպես թափով ծառս ծառս ե լինում  
 ցասկոտ փոթորիկ,  
 Հսկա ծառերին չոքե-չոք անում—  
 դարձնում խաղալիք.  
 Մինչ վոր տեղում ե հեղեղը վայրագ  
 և ինչպես փրկանք՝  
 Ծանր յերկունքից ազատում աշխարհ.  
 Բնությունը հաղթ ժպտում ե ապա  
 պայծառ արեգին—  
 Վորպես պատասխան չար արհավիրքին...

\*  
\*  
\*

Լսե՛լ ես, ընկեր ծննդականի ճիշը  
 հուսահատ,  
 Վոր գալարվելով արգանդի ցավից  
 պուռա անընդհատ...  
 Վիրավոր ընկած այն եզ առյուծն ե  
 այնպես մռնչում,  
 Յերկունքի ժամին մեծ աղատության  
 ոգնության կանչում.  
 Կյանքի և մահու պայքարը մղող  
 այն մայրն ե տանջվող...  
 Իսկ յերբ հասնում ե հուսո բախտավոր  
 ժամը փրկավետ,  
 Տեսե՛լ ես ինչպես այդ խորհրդավոր  
 վեհ պայթումից հետ,  
 Մի վսեմ, խաղաղ մայրական ժպիտ,  
 վորպես վառ հակինթ,  
 Փայլում ե նրա արնոտ շուրթերում—  
 դեմքը զարդարում:


\* \* \*

Այսպես եր անա և այն վեհ ժամին  
 Հեղափոխության,  
 Յերբ վոր բաղխվեցին իրար հակառակ  
 յերկու ախոյան.  
 Ալիքի նման խուլ մորնչացին  
 յերկու հզոր ուժ,  
 Աշխարհը ցնցվեց .. ու յեղան կործան  
 կարգերը վատուժ.  
 Վայրագ հեղեղին, շանթ ու փոթորկին  
 Հեռեց թափով հեղեղ ցնծության,  
 Յերկունքի միջից մանուկը ծնվեց  
 Մեծ ազատության:  
 Ընկեր իմ, ընկեր, անա Մանուկը  
 Հեղափոխության.  
 Փորձության ժամին յերգվիր կրճբովդ  
 պաշտպանել նրան:

709

ԷԿ

1906 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԻՆԸ 30 ԳՈԳ.

257

ՀԱՅ ՊՐՈԼԵՏ-ԳՐՈՂՆԵՐԻ ԱՍՏՈՑԻԱՑԻԱ

0014627

2015

« Ազգային գրադարան »



NL0014627

